ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱԼՎՈՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ ТАЛВОРИК

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ համայնք
Գ.Չաուշի փողոց N 26 հեռ. 098 01-56-01 էլ. Փոստ talvorik.armavir@mta.gov.am

«13» Հոկտեմբերի 2020թ

N 169

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
Պարոն՝ Հ.Մաթևոսյանին

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ավագանու 2020 թվականի Հոկտեմբերի 5-ի թիվ 16 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 7 թերթ:

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ ԱԼ-22289-2020
14 10 2020թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ավագանու օրակարգի հաստատման մասին:

Զեկ՝ Կ.Սաղաթելյան

2. «Անհայտ» քաղաքացու սեփականություն համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Զեկ՝ Կ.Սաղաթելյան

3. Գումարի հատկացման մասին:

Զեկ՝ Կ.Սաղաթելյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ավագանու 2019 թվականի Դեկտեմբերի 23-ի «Տալվորիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 15 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ՝ Կ.Սաղաթելյան

5. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ՝ Կ.Սաղաթելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2020թ. Հոկտեմբերի 5 — թիվ 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով և 17-րդ հոդվածով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել թիվ 16 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Վ. Հարությունյան | | | |
| | Ջ.Զաքարյան | | | |
| | Մ.Կարապետյան | | | |
| | Թ.Բարեղամյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մաղաթելյան

5 Հոկտեմբերի 2020թ.

գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի Հոկտեմբերի 5 — թիվ 2

## «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010 թվականի № 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման» հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին՝

Որոշում է.

1. ՀՀ Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքում գտնվող 183-003 ծածկագրի 0.3736 հա գյուղնշանակության հողամասը (խաղողի այգի),122-005 ծածկագրի 0.3191 հա գյուղնշանակության հողամասը ( կորիզավոր) 152-002 ծածկագրի 0.1472 հա գյուղնշանակության վարելահողը, 104-002 ծածկագրի 1.5332 հա գյուղնշանակության վարելահողը և 105-004 ծածկագրի 0.9065 հա գյուղնաշանակության հողերը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշմամբ համայնքային սեփականություն ճանաչված հողամասերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում պետական գրանցման,

3. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Վ. Հարությունյան | [signature] | | |
| | Ջ.Զաքարյան | [signature] | | |
| | Մ.Կարապետյան | [signature] | | |
| | Թ.Բարեղամյան | [signature] | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

05 Հոկտեմբերի 2020թ.
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի Հոկտեմբերի 5 թիվ 3

# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Տալվորիկ համայնքի բազմամյա տնկարքների ներքին ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար ապրանքների ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 76410 ՀՀ դրամ գումար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Վ. Հարությունյան | | | |
| | Զ.Զաքարյան | | | |
| | Մ.Կարապետյան | | | |
| | Թ.Բարեղամյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
05 Հոկտեմբերի 2020թ.
գ. Տալվորիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

**2020** թվականի Հոկտեմբերի 05 | թիվ 4-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի «ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,« Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով .

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Տալվորիկ համայնքի ավագանու 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Վ. Հարությունյան | | | |
| | Զ.Զաքարյան | | | |
| | Մ.Կարապետյան | | | |
| | Թ.Բաբեղամյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԱՂԱԹԵԼՅԱՆ

05 հոկտեմբերի 2020թ.

գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի
N -4 Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11.1.2 հատվածի 4891 հոդվածից 50,0 հազ.դրամ հատկացնել համայնքի վարչական բյուջեի 4819 հոդվածին (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) Հայաստանի Համահայկական հիմնադրամին հատկացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի Հոկտեմբերի 05 — թիվ 5

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկի համայնքի բյուջեից հատկացնել 50000 ( հիսուն հազար) դրամ գումար, Արցախում վիրավորված Տալվորիկ համայնքի բնակիչ զինծառայող Մհեր Համլետի Վարդանյանի ընտանիքին:
2.Տալվորիկ համայնքի բյուջեից 50000 ( հիսուն հազար) դրամ գումար փոխանցել Հայաստանի Համահայկական հիմնադրամին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | Վ. Հարությունյան | [signature] | | |
| | Զ.Զաքարյան | [signature] | | |
| | Մ.Կարապետյան | [signature] | | |
| | Թ.Բաբլոյան | [signature] | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
05 Հոկտեմբերի 2020թ.
գ. Տալվորիկ